Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2013 թ.
հունվարի 17 -ի N 20 - Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրում ներառված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումների) իրականացումն ապահովելու նպատակով ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) խորհրդակցական մարմին է, որի գործունեության նպատակը միջոցառումների իրականացման ապահովմանն աջակցելն է:

2. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) տարեցներին մատուցվող առողջապահական և սոցիալական ծառայությունների որակի բարելավմանն աջակցելը.

2) համայնքում տարեցների հասարակական գործունեությունը խթանելու, նրանց դերը համայնքային մակարդակում բարձրացնելու և համայնքում նրանց ինտեգրման ապահովմանը նպաստելը.

3) կյանքի որակի բարելավման և անկախ ապրելակերպին նպաստող պայմանների ստեղծմանն աջակցելը.

4) սոցիալական պաշտպանության համակարգը՝ բնակչության ծերացման սոցիալական և տնտեսական հետևանքներին համապատասխանեցմանն աջակցելը.

5) տարեցների բնակարանային պայմանների բարելավմանն աջակցելը.

6) ամբողջ կյանքի ընթացքում ուսուցման խրախուսման ապահովմանն աջակցելը.

7) գենդերային հավասարության ապահովմանը նպաստելը.

8) տարեց անդամ ունեցող ընտանիքներին աջակցության ցուցաբերմանը և սերունդ-ների միջև համերաշխության ամրապնդմանը նպաստելը,

9) ծերացման հիմնահարցերի մասին հասարակության տեղեկացվածության բարձրաց-մանը նպաստելը:

4. Հանձնաժողովը՝

1) առաջարկություններ է ներկայացնում համապատասխան պետական լիազոր մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին Բնակչության ծերացման հետևանքներից բխող հիմնախնդիրների լուծման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարության իրականացման 2012-2016 թվականների գործողությունների ծրագրում ներառված միջոցառումների իրականացման վերաբերյալ.

2) քննարկում է տարեցների հիմնահարցերին առնչվող՝ տարբեր ոլորտներում առկա խնդիրները և ներկայացնում համապատասխան առաջարկություններ դրանց լուծման նպատակով.

3) միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացնում է տեղեկատվություն.

4) քննարկում է տարեցների հիմնահարցերի ոլորտին առնչվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը և դրանց վերաբերյալ ներկայացնում առաջարկություն.

5) իրականացնում է օրենքով, սույն աշխատակարգով և այլ իրավական ակտերով իր իրավասությանը վերապահված այլ լիազորություններ:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5. Հանձնաժողովի կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

6. Հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի նախագահից, անդամներից և քարտուղարից:

7. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է հասարակական հիմունքներով:

8. Հանձնաժողովի որոշումներն ունեն երաշխավորական բնույթ:

9. Հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով:

10. Հանձնաժողովի նիստերը գումարվում են յուրաքանչյուր տարին առնվազն 2 անգամ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ հանձնաժողովի նախագահի կամ անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

11. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

12. Հանձնաժողովի նիստերը վարում է հանձնաժողովի նախագահը կամ նրա բացակայության դեպքում նախագահի հանձնարարությամբ՝ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը: Հանձնաժողովի նիստի օրակարգն ու քննարկվելիք հարցերին վերաբերող անհրաժեշտ նյութերը հանձնաժողովի անդամներին են ուղարկվում նիստն սկսվելուց 7 օր առաջ:

13. Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող նյութերի հիման վրա հանձնաժողովն ընդունում է որոշում: Հանձնաժողովի ընդունած որոշումների մասին կազմվում է արձանագրություն:

14. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

15. Հանձնաժողովի նիստն արձանագրվում է: Նիստի արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը: Հանձնաժողովի որոշմանը դեմ քվեարկած հանձնաժողովի անդամների հատուկ գրավոր կարծիքները կցվում են արձանագրությանը:

16. Հավասար ձայների առկայության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

17. Արձանագրությունը հանձնաժողովի անդամներին է ուղարկվում նիստից ոչ ուշ, քան մեկ շաբաթվա ընթացքում:

18. Հանձնաժողովի անդամների առաջարկությամբ և նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել պետական մարմինների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվության միջոց-ների ներկայացուցիչներ:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

19. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեությունը.

2) նշանակում է հանձնաժողովի նիստի անցկացման օրը, վայրը և հաստատում նիստի օրակարգը.

3) հրավիրում է հանձնաժողովի նիստերը.

4) ստորագրում է հանձնաժողովի ընդունած որոշումները և արձանագրությունները, հանձնաժողովի գործունեության հետ կապված գրությունները.

5) ներկայացնում է հանձնաժողովն այլ մարմինների և անձանց հետ հարաբերու-թյուններում.

6) իրականացնում է սույն աշխատակարգից բխող այլ լիազորություններ:

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԸ

20. Հանձնաժողովի անդամը՝

1) մասնակցում է հանձնաժողովի աշխատանքներին.

2) հարցեր և առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովի քննարկմանը.

3) առաջարկություններ է ներկայացնում հանձնաժողովի գործունեության և նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ.

4) ծանոթանում է հանձնաժողովի նիստերի արձանագրություններին.

5) կատարում է հանձնարարականները:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ

21. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) ապահովում է հանձնաժողովի աշխատանքների, նիստերի, օրակարգերի, անհրաժեշտ նյութերի, ինչպես նաև որոշումների նախագծերի նախապատրաստումը և դրանք տրամադրում է հանձնաժողովի անդամներին.

2) հանձնաժողովի անդամներին իրազեկում է հանձնաժողովի նիստերի օրվա, տեղի և ժամի մասին.

3) ստորագրում է հանձնաժողովի որոշումներն ու արձանագրությունները.

4) կազմում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

5) նիստերի որոշումները և արձանագրությունները մեկշաբաթյա ժամկետում ուղարկում է հանձնաժողովի անդամներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2013 թ.
հունվարի 17 -ի N 20 - Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ջ. Բաղդասարյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
Կ. Կոստանյան	- ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահական ծրագրերի և որակի կառավարման վարչության պետ
Ժ. Ասատրյան	- ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի տնտեսության սոցիալական ոլորտի բյուջետային ընթացիկ ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության պետ
Հ. Գալստյան	- ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման և զարգացման վարչության պետ
Ա. Պապոյան	- ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի զարգացման ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետի տեղակալ
Գ. Նազարյան	- ՀՀ մշակույթի նախարարության աշխատակազմի մշակութային ծրագրերի և մոնիթորինգի վարչության պետի տեղակալ
Գ. Ալեքսանյան	- ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ռ. Ջաքարյան	- Երևանի քաղաքապետարանի սոցիալական ապահովության վարչության պետ (համաձայնությամբ)

Ա. Ներսիսյան	- Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի իրավաբանական և լիցեն-զավորման վարչության իրավական ապահովման բաժնի պետ (համաձայնությամբ)
Ա. Հովհաննիսյան	- ՄԱԿ-ի բնակչության զարգացման հիմնադրամի <<Բնակչություն և զարգացում>> ծրագրի համակարգող (համաձայնությամբ)
Հ. Կիրակոսյան	- <<Առաքելություն Հայաստան>> ԲՀԿ-ի նախագահ (համաձայնությամբ)
Ա. Կեսոյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշման-դամների և տարեցների հիմնահարցերի վարչության պետ (հանձնաժողովի քարտուղար)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ